Журнал основан в 1966г.
Выходит 6 раз в году
на русском и английском языках

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Գլխավոր խմբագիր Մ. Մ. Ջրբաշյան

Ն. Հ. Առաքելյան
Ի. Դ. Զասլավսկի
Ա. Ա. Թալալյան
Ռ. Վ. Համբարձումյան
Ս. Ն. Մերգելյան
Ա. Բ. Ներսեսյան
Ռ. Լ. Շահբաղյան
գլխավոր խմբագրի տեղակալ

Պատասխանատու քարտուղար Մ. Ա. Հովհաննիսյան

# Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Խմբագրությունը խնդրում է այն անձանց, ովքեր ցանկանում են հոդվածներ հրատարակել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Տեղեկագիր սերիա «Մաթեմատիկա» ամսագրում, հաշվի առնել հետևյալ կանոնները.

1. Հոդվածների ծավալը, որպես կանոն, պետք է չգերազանցի մեկ տպագրական մամուլը այսինքն ոչ ավելի քան տեքստի 24 մեքենագրված էջ, իսկ համառոտ հաղորդումների ծավալը ոչ ավելի քան 5 - 6 մեքենագրված էջ: Մեկ տպագրական մամուլը գերազանցող ծավալով հոդվածներն ընդունվում են հրատարակման բացառիկ դեպքերում խմբագրական կոլեգիայի հատուկ որոշմամբ:

2. Հոդվածները պետք է ներկայացվեն գրամեքենագրված, երկու օրինակով: Ռուսերեն հայերեն ներկայացված հոդվածին անհրաժեշտ է կցել ամփոփումներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Օտարերկրյա հեղինակների հոդվածները իրենց ցանկությամբ կարող են հրատարակվել համապատասխան լեզվով:

3. Մեծատառ լատինական տառերը, որոնք միանման են համանման փոքրատառերին, պետք է ընդգծվեն սև մատիտով երկու գծերով ներքևում, իսկ փոքրատառերը երկու գծերով վերևում: Հունական տառերը պետք է ընդգծվեն կարմիր մատիտով, ինդեքսները շրջանագծվեն սև մատիտով, իսկ կիսաթավ տառերը ընդգծվեն ալիքաձև գծով:

4. Գծագրերը ներկայացվում են առանձին էջերի վրա, երկու օրինակով, նշելով դրանց համարը և տեղը տեքստի ձախ մասում:

5. Գրականությունը տեղավորվում է հոդվածի վերջում, ընդ որում, գրքերի համար նշվում է հեղինակը, գրքի անունը, հրատարակման տեղը, հրատարակչությունը, հրատարակման տարեթիվը, հոդվածների համար նշվում է հեղինակը, հոդվածի անունը, ամսագիրը, համարը, տարեթիվը և էջերը: Oգտագործված գրականությունը նշվում է քառակուսի փակագծերում, տեքստի համապատասխան տեղում:

6. Սրբագրության ժամանակ հեղինակի կողմից կատարված ինչ-որ շատ զգալի փոփոխություններ բնագրի նկատմամբ չեն թույլատրվում:

7. Հոդվածը վերամշակման նպատակով հեղինակին վերադարձնելու դեպքում, որպես հոդվածի ստացման ժամկետ համարվում է վերջնական տեքստի ստացման օրը:

8. Հոդվածի մերժման դեպքում հեղինակին վերադարձվում է ձեռագրի մեկ օրինակը և խմբագրությունը իրավունք է վերապահում չզբաղվել մերժման պատճառների պարզաբանումով:

9. Հոդվածի վերջում անհրաժեշտ է նշել այն հիմնարկի լրիվ անունը, որտեղ կատարված է տվյալ աշխատանքը:

10. Հեղինակը պետք է ստորագրի հոդվածը, նշի իր լրիվ հասցեն, անունը և հայրանունը:

*Խմբագրության հասցեն* *Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24բ:*
*Գիտությունների ազգային ակադեմիայի Տեղեկագիր,*
*սերիա «Մաթեմատիկա»:*